


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՔԷՆ

ԵՊՈՐՏՅԱՆ

Նամակ կամ որ եւէ
գրութիւն պէտք է ուղղել առ
Նորին ԱՐՇԱՆՈՅՍ Իրազրի
ԳԱՆԻՔ (Եգիպտոս)



ՐԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ

ԵՊՈՐՏՅԱՆ ՀԱՄԱՐ
Տարեկան ողջ դահլիճ . 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԵՐ
Տարեկան մակ » 20
Վեցամսեայ » 12

ՐԱԺԱՆՈՐ ԱԳԻՆԸ ԿԱ ԽԵԿ
Ե թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր

ՍՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի է

E. TOROSSIAN
Dirac.-prop. du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ ԱԶԴ

ԱՐՄԱՆԱՅՍԻ Պատ. բաժնա-
ւորներէն շերտապէս կը խնդրուի որ բա-
րեկանիկ նախորդ տարիէն մնացեալ պար-
տաց կցեղով դրկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ
Տարեկանի բաժնաւորագիրը, եւ հարկ
չը քոչոյզ մասնաւոր դիմումներու, որոնք
նախ դժուարագիրն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-
ՆՈՅՍԻ արդէն բազմազգաց Տնօրինութեան :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ .

Հար է ինաստու թշնամի
խան անկիս բարեկամ .

Ժողովրդական առած

(Շարն . նախորդ թիւէն)

Գաղով Պ . Փաստութեան խնդրոյն ,
որ մոռցուած չ'է տակաւին, անճան և ցա-
ւառիկ կրկնութիւններով ընթերցողին միտ-
քը չ'խճողելու համար, բաւ կը համարիմ
յայտարարել թէ ո'րպիսի սկզբունքներու
վրայ յենլով զբաղեցայ այդ գործով :

Համարաչիտութիւնը՝ յեղափոխական ,
ընկերվարական պարտականութիւն մ'ըլլալէ
առաջ մարդկային պարտականութիւն մ'է :
Յաւազարը գանահարել , խոցեալը խոցել ,
գոթազորը ոտնակոխել , տկարը բռնաբարել
ոճիրներ են , որոնց վերջ մը տալու համար
է որ յեղափոխական մարմիններ գոյութիւն
ունին այսօր մեր մէջ : Մասնակի համար-
ման խժոժութիւն մը տեսնել համարեղ և
համարիւններու մէջ և մարդավայել միջոց-
ներով զայն չեղբացնելու չ'լանալ գասա-
լքութիւն է՝ մանաւանդ հրապարակագրի
համար : Կրկնակի գասալքութիւն է գիտակ
կամ անգիտակ անիրաւին թե ու թիկունք
ըլլալ : Այնպիսի հրապարակագիր մը մա-
հատու թոյն մ'է այն թերթին համար , ո-
րուն սինակները՝ թերեւս միամտօրէն բաց-
ուած են իր առջև : Այս բառերը մասնաւոր
կերպով կը յանձնարարեմ թերթի մը ոչ-
ինքնակոչ (*) առաջնորդ-խմբագրին լուրջ
ուշադրութեան : Զինք կը հրաւիրեմ նաև
աչքէ անցնել իր վարած թերթին 32 թը-
ուոյն մէջ « Նոր-Օրի վարչութեան քարտու-
ղար ներկայացուցել Ս . Փափագեան » ստո-

րագրեալ գրութեան հետեւեալ բառերը :
« . . . եւ ինքնակոչ լինել յորում-
նէր որոնք կը ծառայեն Նոր-Օր ի բարոյա-
կան մակարդակը բարձր պահելու : »

Այս յայտարարութեամբ , յիշեալ թեր-
թը կը պարտէր՝ եթէ ոչ իմ կոչիս՝ գէթ
իր պատահական թղթակից « Զինոյ » ին կո-
չին ձայնակցել , փոխանակ գրողելու անհատ
մը որ իմ վրաս յարձակի անիրաւաբար , և
փողոցային՝ նոյն իսկ իր անձնական շահուն
հակառակ՝ լեզու մը գործածէ ազգային
հաստատութեան մը դէմ . . . :

Բարոյական մակարդակ . . . : Աղուոր
կատակ թերթի մը կողմէն , որ ինքզինքը
կրթական հանտատութեան մ'օրկան -- այս-
ինքն այն հաստատութեան անդամներուն
ձայնն ու սիրտը -- յորթորելով հանդերձ հա-
մանպատակ հաստատութիւնները կը նախա-
տէ , անիրաւութիւնները կը գովաբանէ ,
ճշմարտութիւնը կը հալածէ , սուտը կ'ընդ-
գրկէ , տառապողը կը խոչտանգէ , գայլը
կը խնկարկէ , գառնուկը կը խոզխոզէ և ա-
մենատարրական պատշաճութիւնը չ'յարգեր :

Իմ գրագէտս կը յարձակի թերթի մը
վրայ , վերագրելով անոր խել մը գործո-
ղութիւններ , որոնց համար մի քիչ լուսա-
բանութիւն փափաքելի էր : Յետ այնու կը
գոռայ , կրկնելով ինչ որ արդէն մասամբ
ըսած էր (թերեւս վերաքննեալ և սրբագր-
եալ Բ . տպագրութիւն :)

« Հոն (յիշեալ թերթին մէջ) մին իր
գրիչը « Սփինքս » ի թքած արեան (*) մէջ
կը թաթխէ զբարտեղու համար (տե՛ս վե-
րը) հեղինակութիւն մը որուն ինչ ըլլալը
ոչ ինք հասկցած է (ա՛տ ճիշտ է) և ոչ
միանձնաբար ընող թերթը (եթէ ուրիշ-
ներուն գրութիւնները հրատարակել միան-
ձնաբար է , պէտք է ըսել որ իր թերթին
ալ վարակուած է այդ ախտով) հեղինա-
կութիւն մը որոյ տողերը շարագրող գրի-
չը , այսօր Նոր-Օրի կը նուիրէ զինք անձ-
նուիրաբար . (եթէ այս ռեֆրանը ուրիշ մը
ըրած ըլլար , ո՛վ գիտէ ո՛րպիսի շանթեր
պիտի իջնէին իր գլխուն . բայց քանի որ
ինքը կ'ընէ , մենք խոնարհինք և ըսենք .
գոյութիւնը քանիցս կրկնուած հեղինակու-
թեան շարագրութեան վրայ ստոյգ գաղա-
փար կազմել ուզողը թո՛ղ կարգայ Նոր-Օր
թերթը , սկսեալ 34րդ . թիւէն , և անոր
խմբագրականները , որոնց մի նմոյշն է մեզ
զբաղեցնող Գրական Հրատարակչը :)

Յետ այնու իմ գրագէտս կը վերա-
գառնայ « համայնարանական կրթութիւն

ստացող Ռուսահայ եկեղեցական մը դասա-
պարտոյ » գրիչն :

Եւ կը գոչէ ատենախօսի խանդով մը .
« Հեռի՛ , հեռի՛ , մէկդի թողունք կրօնակ-
ցական ոգին ու անհատական խնդիրները
(զուք ձեզի ըսէ՛ք) վանկնք զանոնք մեր
թերթերուն մէջէն որ մեր տունը քանդելու
կը ծառայեն (ո՛վ հայկաբաններ , եթէ դուք
ալ չ'անակացաք , ըսէ՛ք կ'աղաչեմ , իմ
գրագէտս ո՛ր բաները կ'ամբաստանէ իբր
մեր տունը քանդողներ , վարի թերթը՝ ըր
թէ՛ վերի խնդիրները :)

Անցնինք իրենց յատկութեամբ և տը-
րամաբանութեամբ ակնախօսի և խելայն-
զիչ հատուածներու վրայէն , և հանինք
տեղ մը ուր կը կարգանք .

« Գահիրէի Որբախնամները միանալով՝
Խորվական թատրոնին մէջ մեծ պարահան-
գէս մը պիտի տան , ի նպաստ սրբերու և
Հայ Լսարան-Ընթերցատան որ ունի իր Օռ-
կանը Նոր-Օր » :

Որբերու և բարենպատակ հաստատու-
թեան մը սիրոյն համար յաջողութիւն կը
մաղթեմ : Միայն թէ . . . բայց երբ ժա-
մանակը գայ՝ կը խօսիմ :

Եւ հիմայ սքանչազէք սա ծաղկեփուն-
ջին վրայ , զոր բազմաշխատ առաջնորդ-
յօգուածագիրը իր ընթերցողներուն կը ներ-
կայէ իբր եղբակացութիւն իր հոգեզմայլ
չրութեան :

Կարգացէ՛ք և խոկացէ՛ք :

(Իննագատութիւնը) բանաստեղծու-
թիւն յօրինելու չ'նմանիր , որ ներշնչում
մ'է . ո՛չ ալ գեղեցկութիւն մը նկարագրե-
լու որ յատկութիւն մ'է (տգեղութիւն նը-
կարագրել յատկութիւն չ'է՞) քննադատա-
կանին մէջ օտարի մը աւարտք և գործը
մատնանիչ կ'ըլլայ (տե՛ս աշտրկները կոր-
ցած է) որ աւելի տրամաբանական և ա-
ռողջ գաղափարներու և պատշաճ լեզուի
կարօտ է : »

Եւ սրովհետեւ իմ գրագէտիս գրածը
ո՛չ բանաստեղծութիւն է և ո՛չ ալ նկարա-
գրութիւն , որոնք խօշալ բաներ են , այլ
գրածը քննադատութիւն է , անոր համար
է որ տիեզերքի բոլոր տրամաբանական և
առողջ գաղափարներ և պատշաճ լեզուներ
ըր ատոր մէջ կուտակուած է , ինչպէս որ
պատիւ ունեցանք ճաշակելու :

Ըսենք . Ամեն . նշանակե՛նք՝ Գիւտ թիւ
3 . չ'խնդանք , այլ արգահատինք և Լաւա-
գոյնը գրելու աշխատինք :

Գ .

ԱՆՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԱՒԱՋԱԽՑ-ՀԱՍՍԹ (Կրայի)

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ

Հիւանդութիւնները սիրելի բաներ չեն, սակայն անձնուրաց ջանքերով հիւանդներուն սնարին մօտ հակել, զանոնք զարմանել ու քրիստոնէական միջամտական խօսքերով անոնց վշտաբեկ հոգին սփոփելը վսեմ, անդուգական գործ մ'է, զոր չէ կարելի բազմաթիւ աշխարհի առեւտրական կամ պաշտօնավարական շահասէր ու մամոնապաշտ զբաղումներուն հետ, Հիւանդներուն հետ ապրելով՝ անոնց արցունքոտ ու սրբ-տաշարժ կեանքը ու հոգեկոտոր զգացումները ուսումնասիրել քրիստոնէայ բժիշկներուն ու հիւանդներուն անհրաժեշտ, քաղցր պարտականութիւնն ըլլալ պարտի: Այդ միջնորդութեամբ շատ անուշ ու հաճելի է կեանքի թանկագին արժէքը գնահատել զիտարողներուն համար: Գիտութեան անձայրածիր սիլիկոնէն ժայթքող եւ մեր սահմանափակ գիտելիքուն մէջ տեղաւորուող քանի մը կաթիլ ծանօթութիւնները մեզ փքացնելով՝ թող չհեռացնեն այս յիշատակուած բարձր նպատակէն: Թուղթի կտորներու վրայ գրուած անընթեանի նշանագրերով, սիգապանձ նայուածքով եւ հեզնոտ բառերով ու կոկոզաբանութիւններով հիւանդը շլացնելու եւ հետեւաբար զայն խաբելու երբէք չհետամտինք: Գծուած ձեռք-տուփերէ կազմուած սեւ նկարագիր մ'է այդ, որոյ բնաւ հաղորդ ըլլալու չեն հիւանդներու թանախից կեանքով զբաղող տիտղոսաւոր անձնաւորութիւնները: Բժշկութիւնը սիրոյ արուեստն է: Ընդամենը սէրը տառապող հոգեկոտոր կարենալ սփոփելուն մէջ կը կայանայ: Սիրազեղ Արարչին անյատակ սրտէն բղձող զերազոյն սիրալոյսէն է այն՝ որով կը կենդանավատի անհուն արեւելքը: Այդ սէրը շօշափեցինք մենք յանձին Գրիստոսի: Ճաշակեցինք զայն եւ տեսնեք որ քաղցր էր: Ընդամենը, անկեղծ քրիստոնէական կենդանի բղիջը կը կազմեն այդ մեղքանուշ սիրտը՝ որ հոգեշաղկունստու հոտանուան է անպատճառ, Անպարզութիւնը չըթնեմք կաթիլով:

Իրական բժշկութեան հիմունքը կը կազմեն հաւատք, յոյս ու սեր՝ զոր սրբազորեղ Մարգարեալը իր հիանալի, նուիրական գործերով ու կեանքով: Արի, հեզկոտոր, զիտարտ ու անձնազօր բժիշկն էր այն՝ որոյ քայլերուն ու սկզբունքներուն հետեւելու են ներկայիսները, եւ մարմնող հոգիները վերակենդանացնելու, համար ետանդեմք, քրտամք, հստատքով ու սիրով աշխատելու են: Հիւանդներու տուտապահին հնչումը ըմբռնելու եւ հիւանդութիւններու փոփոխ շրջաններն ու զարմանալիք երեւոյթները

ընկելու սենյակով վառուած մտքերը՝ լոկ դեղագրեր յօրինելով չեն շատանար երբէք... Իրենց վրայ ծանրացող սրբազան, կենսական պարտականութիւնը կը ճանչնան, եւ աղիողորմ վշտերուն նիւթարկուողներուն ապաքինման ստորա ըլլալու ջանքով փափաքով՝ անձներին վտանգի կը դրնեն: Ահա՛ այս է իրական ու պատուաբեր բժշկութիւնը, սիրելի ընթացողներ, որ բարոյականութիւն, գիտութիւն ու սէր կը բուրհ, եւ արժանի է համակրութեան: Հաւատացէ՛ք, առանց մաքուր կրօնի ու բարոյականի բժշկութիւնը կուտ մը չ'արժեք: Անկրօն բժիշկներուն ինչպէս եւ անբարոյական գրուածներուն օր քան օրէ յաւելումը չարազէտ, սեռին ալլատեման պատճառ, եւ հիւանդութեանց բազմապատկուելուն յաւէտ միջոց եղած են: Գննեցէ՛ք բժշկական, զբաղմունքի պատմութիւնը, անցեալին ու ներկային մէջ ապրող բժիշկները, զբաղմունքը, յօգուածագիրները, կրօնաւորները եւ անոնց իւրաքանչիւրին նկարագիրն ու գործը, եւ մարդկային ազգի այժմու վտանգը, շուայտ, ստիպող ու հիւանդ կեանքը՝ յայնժամ ստոյգ գաղափար մը պիտի կրնաք կազմել մեր ըսածներուն նկատմամբ:

Հիւանդութիւններու վրայ գրեւոր համար անբաւական են սեռական ու գիտական գաղափարները: Երբ այս պատճառաւ, մեր բժիշկները քանի մը տարի դպրոցներու եւ քիչ մը ատեն հիւանդանոցներու մէջ անցնելով՝ գործնական, փորձառական ու հիւանդատուական բաւականաչափ հասկացողութիւն ու հմտութիւն ունեցած ըլլալ ոչ միայն յաւակնելու չեն, այլ յարձակուած ստուսնասիրելու եւ կեանքերին գոհելու են բանիւ ու գործով, ցուերով տապիւնողներն ու հոգեբով բեռնաւորողներն սփոփելու համար: Քրիստոնէական, ժրջանը բժիշկի մը անհրաժեշտ կարեւորութիւնը կեանքի ճշմարտամային վայրկեաններուն յայտնապէս զգալի կ'ըլլայ: Բայց, զբաղմունքը, պէտքի այս զգալի գիտակցութիւնը զոգցես շարունակ գիտակցութիւն միտելու դասապարտուած է:

Անտարակոյս գիտար է ինձ նման ոտք նոր ելլող համալի մը բարձրանալ գիտութեանց սեպտիւ սանդուխներէն վեր եւ ճախրել անոնց անսահման ոլորաններուն մէջ. սակայն՝ խելաւորութիւնը ինձ լուսութիւնը, գիտութեան նըկատմամբ ունեցած անձկայրաց փափաքս եւ քանի մը ծանօթներու թելազրութիւնները մերթ կը մղեն զիս ասպարէզ իջնալու եւ գիտութեան հրաբուրք հնոցէն քանի մը կայծ շորթելով բանիցնելու երկրպագանակ հայոց գիտական անձուկ հրապարակը: Երկու տարիէ ի վեր հիւանդներու հետ անցուցած մտեմական ժամանցներս ամբողջ կապեցին զիս այդ անբացատրելի շօշափած էր իւր փափակ թերթերը, եւ կամ միթէ՞ կրակէ ցող մը իջած էր իւր ծոցին վրայ...:

Ապրած էր նա հոն ուր տխրութիւնը գոյութիւն չ'ունի ու երանութիւնը միայն կ'իջիւն, հոն ուր սիրտը կը խօսի, եւ էակը զգայուն կ'ապրի միշտ, հոն ուր անուշ ալլալութեանց աղբիւրը կը հոսի անդադար ու մտքերը կ'անդրադառնան միշտ զէպիլ վսեմը. ապրած էր նա այդ վերացական աշխարհին մէջ ու այժմ կ'ուզէին բաժնիլ զինքը այդ կեանքին:

Շատ քիչ տեսեց այդ կեանքը. աւա՛ղ, շատ քիչ, շուտ մը սահեցան անցան այն օրերը շատ շուտ, թողնով միայն միացող աւերակ մը: Երբ մայ կը յիշէր նա այդ երջանկաբոյր օրերը, անուշ վայրկեանները որոնք այժմ ստուերի մը նման կ'անցնէին իւր թոց աչքերուն առջեւէն կը պատկերանային իւր տեղտու կրեւակայութեան մէջ, սիրտը, կրքնիկ լայն սիրտը որ չ'էր սեղմեր իւր կուրծքին տակ, կը առչտեր, կ'այրէր, կը մխար, ալ անզուսպ փափաք մը միայն ունէր փափաք մը որ զինքը կը սոսկացնէր...:

« Չարժէր կ'ըսէր ապրել »... ու քիչ յետոյ կը յաւելուր « չ'արժէր սիրել ապրելախ հոգի մը: Կոզի մը որ չի զգար, հոգի մը, որ անկեղծ չ'է... պէտք է վսեմ զայն մտածուաներէն: Դուրս պէտք է վսեմ անոր հեզ-

լի սիրոյ կեանքին՝ յորմէ բաժնուել չէ հնար: Սակայն, զբական թատերաբեմին վրայ կարողագոյնի մը երեւումը՝ ազգիս մտաւորական մակարդակին վերամբարձման բաղձացող հոգեակու ուրախութեամբ պիտի համակէ, եւ հըմուտ սլացողի մը վեհ ակնարկներն ու բարոյացուցիչ գաղափարները պիտի հարկադրեն զիս գիտական ազատարձակ գաշտին մէջ սանձարձակ ընկելու ստիպուած խօլ թռչններու սահմանները ամփոփել:

(Շարունակելի) Կ. Գ. ՈՒՋՈՒՆԵԱՆ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԼՍՏԻՆ Արքեպիսկոպոս Կառուէնցի Պօնֆեկլի, ընդունուեցաւ Ն. Բ. Խրեփլի կողմէն և նորին Բարձրութեան յանձնեց Հռովմէ քահանայապետին մի ինքնագիր նամակը, որու միջոցաւ Ս. Պապը իր շնորհակալութիւնը կը յայտնէ՝ իրեն իբր նուէր խրկուած հնութեանց համար:

ԿԸ ԼՍԵՆԻ Թէ՛ Ապոստոլի Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան ընդհանուր Ժողովը, իր կիրակի օրուան նստին մէջ, որոշեց վեց ամիս ևս շարունակել «Նոր-Օր» թերթը, և յետ այնու խորհիլ Թէ՛ պէ՛տք է զայն դադարեցնել Թէ՛ ո՛չ: Այս որոշումով անդամները յուշեցան ղեկուսած եղանակներին միջոցաւ այս թուական անկախացուելիք հաշտեցնելը:

Գարձեալ կը լսենք Թէ՛ Պատ. Գաղաք. Ժողովն նորեկ համալսարանական Գահանան Տնօրէն նշանակած է Գալստեան վարժարանին:

Յակոբ վարդապետ Աշոտ օգափոխութեան պատրուակաւ առաջնորդական Տեղապահութիւնը կորզեց երբեմն, համալսարանական քահանան ուխտագնացութեան առթիւ պաշտօն մը կը շահի...:

Համալսարանական քահանային կարողութեան վրայ մենք այնչափ բան գիտենք, որչափ գրուեցաւ «Արշալոյս»-ի մէջ, սակայն իւր ընթացքէն՝ որոյ մասին պարբերաբար կարգ մը զրոյցներ կը շրջին, կը հետեցնենք Թէ՛ իր վրայ գրուած յոյսերը ի գերեւ պիտի ելլեն:

Տեսնուած է համալսարանական մը որ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍԻՐԱՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
ՍԻՐԱՆՈՅՑ

Մուլար քայլերով կը յառաջանար, սխուր էր ու մտածկոտ. ո՛ւր կ'երթար, ինքն ալ չ'էր գիտեր, գիշերը շատոնց սեւ քող մը սփռած էր անհունին վրայ, սեւ՝ իւր սրտին պէս... սեւ իւր մտածումներուն նման... տարտամ ակնարկներ միայն կը թողուր չորս դին, հառաչներ ու կցկոտոր բառեր կը թռէին իւր շրթներէն, որոնք երբեմն ժպիտներ կը բղխէին. մըթազնամ, տփոյն զէմքին վրայ անհուն տրամուծեան հոգեարարուած մտայն պատած էր իւր սովորական զուարթութեան տեղ. խոշոր կապոյտ աչքերը որոնք երբեմն սէր կը ցոլացնէին, հիմայ հոն աղօտ յուսահատութիւնը միայն կը պլպլար. չիկագոյն մագերը որոնք իր սիրուն ճակտին շքեղութիւնը կը կազմէին ու անոր գեղեցիկութեան փայլը կ'աւելցնէին՝ թափած էին, ուսերուն վրայ տարողնած, տարողնած մանիշակի մը պէս. որուն փափուկ թերթերը առաւօտեան շաղէն թրջած կը հակին զէպի վայր գողցես նեղացած բնութեան այդ կենսատու կատակէն, վարդ մը՝ թողնելու դատապարտուած, ի՛նչ եղած էր իրեն, ի՛նչ ունէր, արդեօ՞ք պաղ հով

նող պատկերը երեւակայութեանս մէջէն, պէտք է անիծեմ զինքը... անիծե՛լ... ան ո՛չ ո՛չ... չ'սիրել, ո՛հ, այս բառերը այս խորհրդածութիւնները կը տառապեցնեն զիս »:

Յաճախ կը կրկնէր սոյն բառերը. անվերջանալի կռիւ մ'է որ կը մղուէր իւր մէջ. կռիւ մը կամքի՛ հանդէպ սիրոյ. որու արցունքներ միայն կը միջամտէին, արցունքներ՝ որոնք յաւիտեանականութեան ծոցէն կը բղխէին գողցես:

Տխուր ու դառն էր այս կեանքը, գիշերները քուն չ'ունէր, կը շրջէր իր սենեկին մէջ աչքերը յառած գէպի հոն. ուրկէ իր երջանկաւատ արշալոյսը ծագած էր. հոն ուրկէ իր արտառիթ գիշերը կը հիւսէր իր թանձր մուծը... Լքուած, միայնակ կուլար. միշտ կուլար դուրս թափելու համար իր մէջ կուտակուած դառնութիւնները, վշտերու անձրեւներ միայն կը հոսէին այժմ որոնք հոգեոյն խորերէն կը բղխէին նաբեց զիս վատը, կը կրկնէր, խաբեց զիս...» վայրկեանները կը սահէին կ'անցնէին ու իրենց թուոցը չափ տառապանքներ կ'աւելցնէին թըրուատուհոյն սրտին մէջ. հոգեկան տապնապանքուն մէջ կը հիւսէր, կը սաշէր օրէ օր... Երկայն գիշերներ անքուն էր. երբեմն կը մօտենար պատուհանին, կը դիտէր լուսինը, լեբկ պայծառ լուսինը որ թշուառներու մտերմին է, կարծես կը խօսէր անոր հետ՝ յափշտակուած. գողցես անկէ կ'ապասէր միջիթարութեան նշոյլ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 3 դեկտ. — Կիմացուի որ Գերմանական չորս շոկատ ծանրապէս վը-

Բարիկ 3 դեկտ. — Գերմանիոյ կայս- րը պատճառաբանելով նախապէս եղած տը-

Լոնտոն 3 դեկտ. — Միացեալ-Նա- հանգաց նախագահը կը յայտարարէ որ Ա-

ՀՕԱՆՏԱՅԻ Թագուհին հետեւալ հե- ուագիրը խրկեց նախագահ Գրիւկէրին :

Լահէյ 13 նոյեմբեր Առ Պարոն Բօլ Գրիւկէր , նախագահ Հարա-Ափրիկեան Հանրապետութեան Հաճելի եղաւ ինձ Ձեր Վսեմութեան տրամադրութեան տակ գնել իմ Կեռքերանիս

ՔՐՕՅԵՍԵՐ ՊԵՁՁԵԱՆՆԵՐ ԴԱՀԻՐԷ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Շատերուն արդէն ծանօթ է Բրօֆէ- սէօր Պէզճեան . իսկ կան ուրիշներ որ բը- նաւ չեն ճանչնար զայն , կամ գէթ անոր անունը միայն լսած են . Այսպիսիներուն ծանօթացնելու համար մեր յարգելի Բրօ-

Բրօֆ . Պէզճեան Կիլիկիոյ երկնակա- մարին վրայ փայլող փառաւոր աստղերէն մին է : Անիկա կեդրոնական թուրքիոյ Գօլէճի Հիմնադիրներէն մին ըլլալով անոր այս աստիճան հուշակ հանելուն և իրապէս ազգօգուտ հաստատութիւն մը ըլլալուն մեծապէս սատարած է : Այնթապի Գօլէ- ճին անունը գրեթէ նոյնացած է Պէզճեան

ները որոնց վրայէն երբեմն նշաւակ մը սուրա- լով կ'անցնէր , կ'անհետանար , տանելով իրեն հետ ճերմակ փրփուրներ միայն . հիմայ կը սի- ըրէր ծովը , կը դիտէր զայն , կը դիտէր՝ յափշ- տակուած՝ անոր մեղմ ալիքները որոնք փոքր սո փոքր բարձրանալով զիրար կը փշթէին , ի- ընց յաջողող նոր ալիքներու առջև միթէ մարդկութիւնն ալ չ'էր նմաներ ատոնց . ինչո՞վ կը տարբերէր անոնցմէ . . . ոչինչով . . . :

Արեգակը մարը մտած էր , երբ նա ցնցը- ուեցաւ . . . ելաւ չորս կողմը նայելով . . . տա- տամած ուրուակներու նման կամացուկ մը գուռը բացաւ ու մոլոր քայլերով սանդուխտե- ընէ վար իջաւ . . . ծնկուրները սկսան կքիլ , յենարանը բռնեց , քիչ մը կանկ առաւ , վարա- նոտ ակնարկներ նետեց չորս կողմ . . . կարծես նոր ոյժ մը ստանալով դարձեալ շարունակեց գնացքը . փողոցին դուռը բացաւ կամացուկ մը ու գուռս ելաւ :

Գիշեր էր . երազները մշուշին մէջ ցըր- ուած . . . և ունայնութիւնը յաւիտենականու- թեան մէջ սեւեռած . . . լուսնի աղօտ ճառա- գայթնբու հետ ծովուն յատակը կը պրպտէին . աննունին մէջ մերթ ընդ մերթ տկար սուլում- ներ կը լսուէին . սոքա ուրուատեսիլ ցնորքնե- ռու ողբերն էին որք մեղմ ծովուն գէմ ծփացող ալեաց հետ մերձակայ ժայռերուն կը բաղխէին .

անուան հետ : Անիկա կրնայ պարծիլ բազ- մաթիւ ընթացաւարտներով որոնք ցրուած են երկրազնտին ամեն կողմերը : Բրօֆէ- սէօրը , անշուշտ , իր այս վերջին ուղեու- ռութեան ժամանակ , հանդիպած ըլլալու է իրեն սրտաբուզի բարիգալուստ մալթող վաղեմի և սիրելի աշակերտներու : Անոնց մէջ կը գտնուին Հայ ազգին պատիւ բերող ճարտար բժիշկներ , նշանաւոր փաստաբան- ներ , պերճախօս քարոզիչներ , գիտնական բրօֆէսէօրներ և ընչատէր վաճառականներ :

Թէև Պէզճեան այսչափ նշանաւոր ա- շակերտներ հանած է , սակայն անոր նը- կատմամբ քրիստոսի խօսքը յաւելու ճշմա- ըրտ մնացած է թէ աշակերտը իր վարդա- պետէն մեծ չէ : Այս է անոր մեծութեան գաղտնիքը . նա միշտ ընթացած է գիտա- կան աշխարհի ընթացքին հետ և իր աշա- կերտներուն ամենէն յառաջագէմէն և մտա- ցիկէն հիացում և սքանչացում կորզած է : Ուրիշ կէտ մըն ալ որ անոր յաջողութեան ժողովրդականութեան սատար եղած է , անոր սրտին ազնուութիւնն է : Մտաւորա- կան տաղանդ և սրտի ազնուութիւն երբ միման անգնահատելի խառնուրդ մը կը կազմեն : Անոր աշակերտները չ'է թէ միայն անկէ կ'ակնածին , այլ կը սիրեն զինքը :

Այս նկատումներով հասկնալի է թէ՛ անոր Գահիրէ այցելութեան լուրը որչափ մեծ ուրախութիւն պատճառեց զինքը թէ՛ անձամբ և թէ՛ յանուանէ ճանչցողներուն . Երջանիկ անակնկալ մըն էր արդարև իմա- նալ թէ Բրօֆ . Պէզճեան Գահիրէ կը գըտ- նուի : Տասնըրորս կամ տասնըհինգ տարի- ներու ժամանակամիջոց մը անոր վրայ մի- այն սա փոփոխութիւնը գործած է որ ա- նոր բնապէս կայտառ գէմքին փառաւորա- պէս ալեզարգ կերպարանք մը տուած է :

Թափանցող աչքերը , պատկառելի դէմքը , ժպտուն շրթունքները , կարմիր այտերը , որ առողջութիւն եւ կորով կ'ար- տայայտեն , բարձր և մտացի ճակատը , սը- րախօս դիտողութիւնները , որոնցմէ շատե- ըր ընկերութեան մէջ առածի կարգ անցած են , միշտ նոյն են : Թէև Բրօֆ . Պէզճեան Եւրոպայէն դարձին բաւական փոթորկալից ծովային ճամբորդութիւն մը ունեցած էր ,

երկնի անսահմանութեան վրայ պլպլացող աստ- ղերը եւ անհզութեան մէջ թրջող ասուպները դիւթիչ ներշնչումներ կ'ազդէին էակին վրայ :

Տարտամ երևոյթներու պէս աստ անդ ցըր- ուող սեւ ամպերու երամբերը՝ լուսնոյ հմայիչ ամբողջութիւնը կը պահէին պահ մը սեւ քօղ մը սփռելով համայն տիեզերքի վրայ : Տարաբաղը- ներու համար փշող տարօրինակ սիւքը կը շա- րունակէր քշել տանիլ հեռու՝ն , մութ կապոյտ կամարին վրայ տատանող սեւ ստուերները . . .

Անդին ծովեզրը դարեւու ծանրակշիռ բե- ոին տակ ընկճած սեպաձեւ ժայռերու գագաթը մութ ստուեր մը կը ծածանէր . . . ուրուակա՞ն մ'էր նա : Ո՛չ , վարանոտ կմախք մը , Սիրա- նոյն էր . . . որ կ'ազօթէր . . . հո՛ն իւր գե- թեզմանին մօտ գոր իրեն պաշտելին պեղած էր իրեն համար . ալչ'էր լսեր . սիրտը չ'էր բաղխեր քարուցածէր ձայն մը , ձայն մը միայն լսելի կ'ըլ- ար . իրեն ներքին տազնապնեռու սոսկալի ձայ- նը . . . երբեք . . . եւ յանկարծ բաղխելն մը լսելի եղաւ չոր . . . շատ չոր . . . ու վրէժխնդիր լուռ- թիւնը դարձեալ տիրեց չորս կողմ . . . Սիրա- նոյն անյայտացած էր . . . տարաբաղչներու վը- կան եղող լուսինը ծածկեց իւր դէմքը , սուգը պատեց երկրի վրայ . . . աստղերը տփուռնեցան բնութիւնը ամէցաւ գողցիս . . . յորդառատ ար- ցունքներ տեղացին :

Երկինքը կուլար . . . ԱՐՏԱՇԵՍ ՄՍՐԼԵԱՆ

իր հետ Պէյութեան տիտղոսներ բերէ ու ալ ու ձախ բաշխէ ճրխապիս : Օրինակ մը , որուն ստուգութեան չ'ենք տարակուսիր , պիտի հաստատէ մեր ըսածներն :

Տէր Սրապիոն քահանայ առաջնորդա- րանի գրագիր Պ . Նազարէթ Աղազարմա- նի Նազարէթ Պէյ (Նազար Պէյ) տիտղոսը նուէր բերած է . անպատճառ այս շնորհա- բաշխութիւնը ընել արտօնուած է Տէր Հայրը , Ռուսիոյ Չարէն կամ Խրիմեան Հայրիկէն . եթէ կեղծել գիտէ չ'ըսենք . . . :


Ն . ՎՍԵՄՈՒԹԻՒՆ Տիգրան փաշա Ապրօ , Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան երկու ոսկի նուէր զրկած է , ընդունելով նոյն ընկերութեան Պատ . Գործ , ժողովոյն կողմէ իրեն զրկուած երկու հատոր ԼՈՒՍՈՒՆԱՆԻ անուն երկերն :

ԿԱՌԱՂԱՆ . — Այս առաւօտ ժամը ճիշդ 7ին Մէջնիչի հրապարակին մէջ կախաղան հանուեցաւ Տեղացի մը , որ դատապար- տուած էր դողութեան և ոճրագործութեան կրկին յանցանքներով :

ՆՇԱՆԱՆՍՈՒԹԻՒՆ . — Ինչպէս մեր ան- ցեալ թիւերէն մէկովը ծանուցած էինք , կիրա- կի օրը , 2 Դեկտ . Մեծ . Տիւր Առաքել Պէրպէր- եանի բնակարանին մէջ ի Տահէր , տեղի ունե- ցաւ նշանախօսութեան հանդէսն Ազն . Տիւր Նշան Գայսերիանի ընդ Օրիորդ Մարի Սոռ- խոտունոյ :

Ներկայ էին ազգականք եւ բազմաթիւ բա- րեկամք : Նշանօրհնէքը կատարեցին Արժ . Տէր Եզնիկ եւ Տէր Մամբէ քահանայք :

Մեր սրտագին շնորհաւորութիւնները եր- կու խօսեցեալներուն :



Դիւանս հարկ տեսնելով փութացնել ընկերութեան առ կախ մնացած գործերը՝ որոշեց արտակարգ նիստ մ'ընել ամսոյս 6 ին հինգշաբթի գիշեր ժամը 8 ին ի Պաշար- Մուրուր ընկերութեան սրահին մէջ :

Կը խնդրուի յարգոյ անդամներէն որ ինկատի առնելով ընկերութեան զուտ ազ- գասիրական ուղղութիւնը հաճին ներկայ գտնուիլ յիշեալ նստին :

Ի Դիմաց Մայր-Դիւանի Լսարան-Ըն- թերցատուն Ընկերութեան

Ատենադպիր Ատենապետ Կ . Գ . ՈՒՉՈՒՆԵԱՆ Ա . ՊԱԼԵԱՆ Գահիրէ 4 Դեկտեմբեր 1900

մը . ուրուական մը դարձած էր հալումաչ :

« Ինչո՞ւ կ'ապրիմ , կ'ըսէր , միթէ ա՞յս է կեանք ըսուածը , ա՞յս է աշխարհը , ինչո՞ւ գո- յութիւն ունեցած է թշուառութիւնը . ինչո՞ւ Աստուած վիշտը ու ցաւը մեզ հետ ստեղծած է . միթէ թշուառութեանց ու գոռնութեանց լա- բիւրիներու մը չէ՞ աշխարհ , ուր էակները մի- միայն տառապելու դատապարտուած են , և ի՞նչ է հոգին , բնութեան քմահաճոյից մէկ վայր- կեանին արտադրութիւնը . ի՞նչ է մահը , այդ թշուառ տառապեալ հոգիներու անշուք օթեաւ- նը , ուրեմն ևս ալ հոն կը դիմեմ , թող անխիղճ մարդկութեան զոհերուն վրայ հաս մը եւս ա- ւելնայ , արգեօք կ'արժէ՞ ապրիլ այս գոռնու- թեանց յարկին ներքեւ , կ'արժէ՞ կեանքը այս- չափ ցաւերու փոխարէն , չ'է՞ մի որ ապրիլ եւ մեռնիլ բառերը ըսիր են » :

Առանց զգալու , առանց գիտնալու կը շա- րունակէր տեսչային մենախօսութիւնները , եր- բեմն կրակոտ ձեռքերը ճակտին կը տանէր , ուր կարծես հնոց մը կը վառէր , երկայն ժամեր ան- ընդհատ կը մտածէր , շարունակ կը ցնցուէր՝ քունէ արթնցողի մը պէս . ալ չ'էր լար . կար- ծես արցունքները սպառած էին , կարծես դառ- նութեանց գիւտը ցամքած էր . աչքերը սեւեւ- ուած հեռուն , կը դիտէր ծովուն կապոյտ ալիք-

և յոգնած ու անհանգիստ վիճակի մը մէջ կը գտնուէր . սակայն չ'ուզեց մերժել իր բարեկամներուն զինքը ունկնդրելու միահամուռ փափաքը :

Ըստ իր խօստման անցեալ կիրակի առաւօտ բեմը ելաւ և իր բանախօսութիւնը հիմնելով Յայտնութեան Գրքին , ես տեսայ նորը երկինք և նոր երկիր . քանզի առաջին երկինքն և առաջին երկիրն անցան , նաև ծով չ'կար » , խօսքին վրայ խիստ շահեկան քարոզ մը խօսեցաւ : Նա ցոյց տուաւ որ Յովհաննէսի աքսոր և կղզիացեալ վիճակը Պատմութի մէջ յար և նման է մեր անհատական և ազգային վիճակին : Իմաստով մը մենք ալ աքսոր ենք , կղզիացած ենք , խորունկ և ընդարձակ ծովով մը բաժնուած ենք այն բաներէն որ մեզի սիրելի և նուիրական են : Ծովը , բաժանման խորհրդանշանն է . երջանկութիւն , հանգստութիւն , երկիր , տուն , սիրելիներ ծովէն անդին կը գտնուին : Յովհաննէս իր տեսիլքին մէջ կը տեսնէ որ այս արգելքներով լի հին երկինքը ու երկիրը կ'անցնին և անոնց տեղ նոր երկինք մը և նոր երկիր մը երևան կուգայ որուն մէջ ալ ևս « ծով չ'կար » :

Պատմութի ազատելու , այս ծովէն անցնելու միայն մէկ միջոց կայ : Այս ծովը չ'ենք կրնար ցամքեցնել . արևուն տաքութիւնը որչափ ալ սաստիկ ըլլայ Աթլանտիկին ջուրերը չ'կրնար շոգիացնել : Այս ծովուն վրայ կամուրջ ալ չ'ենք կրնար շինել : Բայց կրնանք նաևով ասոր վրայէն անցնել : Ահա հոս Աւետարանը մեզի օգնութեան կը հասնի : Խաչափայտէն շինուած նաւը զոր Բրիտանիա պատուում մարմնոյն միջոցաւ շինուած և Անոր արեւմտ ծեփուած է ապահովագոյն ճամբան է այս արգելքներուն յաղթելու : Մեզի առ այժմ ամեն բանէ աւելի պէտք եղած ճշմարիտ նկարագիրն է : Բրիտանիական զգացումներով տողորուած նկարագիրներ պատրաստենք և համբերութեամբ սպասենք . « Հայ քրիստոնէայ ենք » խօսքը շրջենք և ըլլանք « քրիստոնէայ հայեր » : Երանի այն օրուն որ մենք ալ Յովհաննէս Առաքեալին պէս պիտի կարենանք ըսել , կանգնած ըլլալով այն նոր երկինքին և նոր երկիրն մէջ , ալ ևս « ծով չ'կար » :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿԻ 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

6944	9605	619	1467	7344	7208
7417	4286	2897	7822	4672	1224
3717	7114	9027	8073	4050	5598
9565	6969	1324	4609	6963	637
8539		7933	1573		

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎՈՐՁԱՐԱՆԻ ՎԵՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿԻ 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

4934	2712	0883	6297	0216	0276
0355	0832	0924	1454	1594	1627
1921	2081	2166	3103	3454	3478
3558	4559	5925	5937	6886	6951
3102	7063	7208	7760	7795	8354

Տպագրութիւն ժողովրդագրական ՏՊԱՐԱՆԻ

ԾԱՄԱՆԱԿԸ ՊԲԱՍ Ե

Անդդիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Գառնիկ Էֆ . Սիրունեան գոհացում տալու համար շատ մը երիտասարդաց փափաքին՝ էօզպէքիէ Մօնթէ Գառլօ Պօթէկայի ճիշտ գէմը իւր տան մէջ Անդդիերէն լեզուի դասեր տալ սկսած է :

Նորագոյն մէթոտով կ'ուսուցանէ միմիայն ՎեՑ ԱՄՄՈՒՄՆ կարճ ժամանակամիջոցի մէջ լաւ կարգաւ , գրել և խօսիլ սոյն ամենակարևոր լեզուն :

Ամեն օր երեկոյին ժամը 5 էն վերջը կը գտնուի իր տունը , ուր կրնան դիմել նաև անդդիերէն աղերսագիր ևն . գրել տալու պէտք ունեցողները :

Փափաքողաց տուները այցելութեամբ դասախօսելու պատրաստ է :

ԻԳՆԱՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՑԵԱՆ ԴԵՐՁՍԿ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ Ծարա Պապ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անդդիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ԳՕԼԱԳՕԹԻ նման կարևոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ և փորձառու , այս անգամ հաստատուած է հանգուցեալ նուպար Փաշայի Տայրաին դիմացը , նորաչէն խանութներուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ , յաճատողքը ըստ ամենայնի գոհ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով , եւ մանաւանդ՝ որ ամենէն կարևորն է , չափաւոր վճարումներու փոխան , ձեւաւոր և ճաշակաւոր զգեստներ ունենալով :

Ա Ջ Դ

Եգիպտոսեանկ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամուլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան , որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն . ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական , գիտական , պատմական և այլ լիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով :

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յլեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Ազգ . վարժարանն ի Տորպ-Էլ-Կի-Նէնա :

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԻԱՌՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԿ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընդունութեան մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՂԸ Օտեսիյի դեղատանին դիւնացի փող ցիւն մեջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ , մութուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ , կ'ընդունուին .

Այցեխարտեր , Երջարտախաւեր , Գիլքեր , Հրախարտեր , Մանազղեր , Տեղեկագիրներ , Կանոնագիրներ , Տոմար և այլ և այլ վաճարականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշդապահութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ .

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ ՄԷԼԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսրի) պիտի գտնէք միմիայն 22 ՎՐԵ ի նիքէլ , կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՎՐԵ է սկսեալ մինչև 2500 ՎՐԵ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամացոյցներ . պատի և քոնսլի բողմազան Բանտի լներ և ամեն հաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան ֆոնդերներու :

Ա . ՊԱՆԵԱՆ Մ Ա Թ Ի Լ Տ (Գաղթականաց կեանքէն) ԴԻՆ 50 ՍԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՊԻՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՐՈՒ

ՏՏՈՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԿԱՐԻՑ .

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քսուտ ձայն պատրաստուած սոյն հաւաքածուին գնել փափաքողներն կամ բաժանող պարուիլ ուզողներն , կրնան դիմել՝ Մրշալյու ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօրէնին :

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԻԱՌՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԿ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Այսարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ինկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրօգուրակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործաւատար յ'Ազգ քանագրիս .